ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ

Հավատացյալ և հավատարիմ հայորդիք:

Այս օրը՝ 24 ապրիլ, տարվան 365 օրերուն մեջ ամենեն հոգելից, հոգեվոր և ազգային ապրումներով հորդուն, գեղուն օրերից մեկն է: Ամեն մեկ հայու հոգիին մեջ այսօր կկատարվի այնպիսի շրջադարձ մը, մտածողության և զգացումի այնպիսի պահ մը, որ ամեն օրվան հատուկ պահ չէ: Եզակի օր մըն է այսօր: Ահավասիկ առավոտուն ձեր բոլորի անունով և մեր հանրապետության վսեմաշուք նախագահին հետ միասին գացինք և ծաղկեպսակ զետեղեցինք Ծիծեռնակաբերդի հուշարձանին առջև որպես հարգանքի արտահայտություն, սիրո կապվածություն այն գաղափարին, այն հավատքին և այն ապրումներուն, որոնց համար իրենց կյանքը տվին մեկ և կես միլիոն հայեր: Ձեզի նման նույն արյունը ունեցող, նույն անունը կրող, նույն անցյալը բաժանող և նույն կյանքի իրավունքին տեր կանգնող ավելի քան մեկ և կես միլիոն հայեր այսօր դարձել են կենսագիր վկաներ:

Այս տարի, ութսունամյակին առիթով, մեր Հայաստանի պետության որոշմամբ և հատուկ հանձնաժողովի կազմակերպական ջանքերով, առաջին անգամ ըլլալով, Հայաստանի Մայր Հողին վրա թանգարան մը բացվեցավ, որուն մեջ մշտաբարբառ պիտի ապրին մեր նահատակները և Հայաստանի բազում թանգարաններուն մեջ եզակի վկայարան մըն է այս թանգարանն ինձ համար և պետք է լինի ձեր բոլորի համար: Եթե մեկը ուզեր ճշգրիտ բնորոշումով նկարագրել այդ թանգարանին իմաստը, **թանգարան** բառեն ավելի հայերեն լեզվին մեջ **վկայարան** բառն էր, որ մենք պետք է ընտրեինք այդ հաստատության համար: Տեղ մը, ուր վկաները կխոսին, վկայությամբ կխոսին և մեր կյանքին մեջ ներգործություն կկատարեն ամեն անգամ, երբ այդ թանգարանին մեջ ոտք կդնենք: Ահավասիկ երեք օրեր ի վեր քաղաքամայր Երևանին մեջ հատուկ գիտաժողով կգումարվի՝ հայ ժողովուրդի և նաև միջազգային կարծիքը սևեռելու համար մեր ժողովուրդի կրած այդ մեծագույն չարիքին՝ 20-րդ դարու Ապրիլյան եղեռնին՝ ղեցասպանությանը: Օտար երկրներեն օտարազգի գիտնականներ, պատ-

մաբաններ համախմբվեցան այստեղ, և դուք բոլորդ ալ հեռուստացույցի, ձայնասփյուռի, մամուլի միջոցավ լսեցիք, թե ի՞նչ գաղափարներ արտահայտվեցան, ի՞նչ հեռանկարներ բացվեցան, ի՞նչ ճշտումներ կատարվեցան, մեկ խոսքով՝ երեք օրերե ի վեր ամբողջ հայությունը Մայր Հայրենիքի մեջ կապրի մեր նահատակներուն հիշատակին կշռույթովը: Անով կարծեք կշնչենք, անով կարծեք կտրոփենք:

Այսօր եկեղեցիին մեջ Սուրբ Պատարագի մատուցմամբ և քիչ ետքը հուշարձանին առջև հոգեհանգստյան արարողության կատարմամբ մենք կրոնական ապրումներու մեջեն պիտի նայինք, թե ի՞նչ ենք մենք, ո՞վ ենք մենք նահատակներու հայելիին մեջ: Ատոր համար ես այսօր ընտրեցի այն խոսքը Սուրբ Գիրքեն, որուն հաճախ մենք անդրադառնալու առիթը չենք ունենար: Եբրայեցվոց թուղթին հեղինակը իր թուղթի 12-րդ գլուխի առաջին համարին մեջ կգրե. «Այսուհետեւ եւ մեք որ այսչափ շուրջ զմեզ մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս, համբերութեամբ ընթացցուք ի պատերազմն որ առաջի կայ մեզ. հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս»: Առաքյալը կըսե. «Մենք, որ մեր շուրջը համախմբված ունենք հսկա բազմություն մը վկաներու, մարտիրոսներու, մեր կյանքի, նկարագրի, ապրումներու մեջեն դուրս շպրտենք այդ ամբարտավանությունը, հպարտությունը և բոլոր այն մեղքերը, որոնք կկաշկանդեն մեզ: Տոկունությամբ, համբերությամբ, հարատևությամբ քայլենք այն պատերազմի մեջեն, որ մեր առջև կա և միշտ նայենք հավատքի զորագլխին և կատարիչին՝ Հիսուս Քրիստոսին»: Ի՜նչ խորունկ բառեր են այս բառերը իմացողին համար, խորհրդածել գիտցող անհատին համար:

* * *

Եղբայրներ, քույրեր, առավոտուն, երբ մեր աչքերն այսօր արևու լույսեն ավելի կնային այն մյուս լույս աչքերուն, որոնք երկինքեն մեզի կնային, այդ աչքերուն մեջ մենք կտեսնենք անմահության, կյանքին, գաղափարին և ապրումին հավերժության հաղթանակը: Հարուցյալ Հիսուսի համար ասվել է. **«մահվամբ զմահ կոխեաց»** (իր մահովը մահը խափանեց), ես այսօր թույլ եմ տալիս ինձ ասելու այս սրբազնագույն բեմից, որ մահվամբն նահատակաց՝ կոխվեց հայության մահը, արգիլվեց հայության մահը և նրանց հաղթանակը այն է, որ մենք ապրեցինք: Իրենք գնացին, բայց չկորան: Եթե կորած լինեին, մենք ինչո՞ւ ենք հուշարձան սարքում, ինչո՞ւ ենք պատարագ անում, ինչո՞ւ ենք նրանց հիշատակը մեր մեջ հավերժորեն ապրեցնում: Դա կնշանակի, որ նրանք չեն կորել, մարմինները գնացել են հողին, խառնվել են ավազին Դեր-Զորի, բայց մարդը մարմնից, ֆիզիկական գոյությունից վեր էակ է, և նահատակները այդ անմահության վկաներն են:

Այսօր ես ուզում եմ երկու բառով միայն ձեզ բոլորիդ՝ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքի չորս տարածքում, այնտեղ, ուր հայեր կապրեն, հրավիրել ու ասել. եկեք, եղբայրներ, մենք մեր հոգիների մեջ նայենք, մեր նայվածքները հավաքենք դրսից, ուրիշների վրա նետված իրենց վիճակից և մեր հոգիների մեջ սևեռինք: Այս օրը բյուրեղացման, հոգեկան մաքրացման օրն է, մեր սայթաքումներին դեմ ընդվզելու օրն է, մեղքին, հանցան-

քին, թերիին, չարին դեմ ըմբոստանալու ժամն է: Եվ փոխարենը մեր մեջ տոկունության, հավատքի ջրդեղումի, ոռոգման, զորացման պահն է: Ունենք մեղքեր, շատ ունենք, ո՞ր մարդը չունե, բայց կարևորն այն է, որ ոչ թե մեղք չունենանք,—դա մարդկայնորեն անկարելի է,—այլ մեղքին դեմ ընդվզելու կամքը ունենանք և բյուրեղանանք: Ամբարտավանությունը, մենք զմեզ ամեն մեկից վեր նկատելու հոգեբանությունը կկաշկանդի մեզ: Մենք պետք է լինենք խոնարհ Աստուծո առաջ, վկաների առաջ, սրբերի առաջ: Խոնարհաբար ընդունենք մեր հանցանքները, մեր թերացումները և՛ իբրև մարդ, և՛ իբրև հայ, հանդեպ ուրիշին, հանդեպ Եկեղեցուն, հանդեպ հայրենիքին: Եթե մի մարդ, ով էլ լինի դա, իր պարտականությունը զլանում է հայրենիքի հանդեպ, մեղք է գործում: Նա, ով որ պարտականությունը զլանում է Աստուծո հանդեպ, մեղք է գործում: Մենք պետք է հոգեբանորեն սրբագրվենք, որովհետև մեզ նայում են նահատակները: Երբ դուք քայլեք, զգաք, որ մեծ մարդիկ ձեզ դիտում են, ձեր քայլերը շտկում եք: Այսօր մենք քայլում ենք նահատակների՛ նայվածքի լուսարձակի ներքև: Հետևաբար, եկեք հոգեկան վերանորոգմամբ վերստին մեր ինքնության քրիստոնեական, մաքուր, հայկական, հարազատ, առաքինի ինքնության մեջ վերականգնվենք: Թող նահատակները լինեն այսօրվան հաղորդությունը ձեզ բոլորիդ: Իրենց կյանքը տալու քաջությունը պետք է բոլորիս համար դաս դառնա, այսինքն՝ անդրադառնանք, որ եթե իրենք իրենց կյանքը տվին, իրենց արյունը թափեցին, մենք այսօր մեր քրտինքը պիտի թափենք՝ հայրենիքի շինության և մեր ժողովրդի բարձրացման համար: Եթե պահանջվի՝ նաև մեր արյունն էլ կտանք վասն կենացն ազգիս և վասն կենացն հայրենյաց: Հեղուկը, որ ամենեն թանկն է աշխարհին մեջ, երկու անուն ունի և երկու տարրերից է բաղկացած: Մեկ հեղուկին անունն է **արյուն,** և մյուս հեղուկին անունն է **քրտինք:** Կենդանի՛ նահատակությամբ, կենդանի՛ վկայությամբ, ապրելո՛վ արժեցնել հերոսությունը, կյանքո՛վ արժեցնել այն հերոսությունը, որ մեր նահատակներն իրենց մահովը արժեցուցին՝ ի գին իրենց արյան: Մենք կյանքին ենք կոչվել, կյանքով մահվան ենք պատասխանում և փչացման՝ վերստեղծմամբ: Թող այս լինի ձեր ճանապարհը:

Հետևաբար նայենք զոլագլուխին՝ Հիսուսին Քրիստոսին: Հավատքի զորագլուխին նայենք և համբերությամբ երթանք այն կյանքին մեջ, որ պատերազմն է չարին դեմ, հաղթանակով դուրս գանք, կյանքի մեջեն հաղթանակով, ինչպես մեր նահատակները հաղթական դուրս եկան իրենց մահվան մեջեն:

Թող Աստված ձեր մեջ այս գիտակցությունն ամրացնի և մեր ազգը վերանորոգվի, պայծառանա հոգով և նայի ապագային Աստուծո աչքերով և մեր նահատակների նայվածքով, հավիտյան հավիտենից, ամեն: